

Հաստատվել է



Հայաստանի Հանրապետության կրթական հայկական պետական մանկավարժական համալսարանի
Գիտական խորհրդի 2019 թ. Ապրիլի 26-ի թիվ 3 նիստում
գիտական խորհրդի նախագահ

Ռ. Միրզախանյան
Ռ. Միրզախանյան

Կ Ա Ր Գ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բակալավրի ավարտական աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը ՀՊՄՀ-ի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրի մասնագրով սահմանված բակալավրի կրթական ծրագրի ավարտական պահանջներից է, նրա տեսական և գործնական պատրաստվածության գնահատման հիմնական չափանիշը և համալսարանում կրթական ծրագրերի իրականացման որակի գնահատական:
2. ՀՊՄՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքը որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակի պահանջներին համապատասխան մասնագիտության վերջնարդյունքներով սահմանված ինքնուրույն վերլուծական և/կամ կիրառական նշանակություն ունեցող աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտական բնագավառում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները:
3. Բակալավրի ավարտական աշխատանքի բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի և ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները և սահմանվում են սույն կարգով:
4. Բակալավրի ավարտական աշխատանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում են ֆակուլտետների խորհուրդները՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից:
5. Ավարտական աշխատանքն ուսանողի կրթական ծրագրի ամփոփիչ բաղադրիչ է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 7-8-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ-10-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի առաջին ամսվա ավարտը պետք է ունենան ավարտական աշխատանքի հաստատված թեմաներ և ղեկավարներ:

Բակալավրի ավարտական աշխատանքը պետք է լինի վերլուծական/կիրառական, ունենա նպատակ, խնդիր, տեսական ընդհանրացումներ և վերլուծական մեկնաբանություններ, ցուցադրի բակալավրի մասնագիտության շրջանակներում գիտելիքները կիրառելու, մասնագիտական ոլորտին առնչվող

խնդիրներ բարձրացնելու հմտություններն ու կարողությունները:

2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

1. Ավարտական աշխատանքի թեմաների բազան ստեղծվում է մասնագիտական ամբիոնում՝ ելակետ ունենալով կրթական ծրագրի վերջնարդյունքները: Թեմաների առաջարկման ժամանակ ուսանողների և գործատուների մասնակցությունը խրախուսելի է:
2. Բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի ընտրությունն առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվում է մինչև ավարտական կուրս փոխադրվելը. բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողը քննաշրջանի ավարտին (առկա ուսուցմամբ՝ 6-րդ և հեռակա ուսուցմամբ՝ 8-րդ կիսամյակներում) նախորդող շաբաթվա ընթացքում մասնագիտական ամբիոնի վարիչին ներկայացնում է հայտ ավարտական աշխատանքի թեմայի և ղեկավարի ընտրության վերաբերյալ (Հավելված)՝ առաջադրված ցանկի համաձայն:
3. Մասնագիտական ամբիոնն ավարտական աշխատանքի թեմաները համապատասխան ձևաչափով (Հավելված), ներկայացնում է ֆակուլտետային խորհրդի հաստատմանը:
4. Ավարտական աշխատանքի հաստատված թեմաներն ըստ ուսանողների և ղեկավարների (Հավելված 3) ներկայացվում են Ուսանողական ակադեմիական հետազոծի (շաբժի) կազմակերպման բաժին ուսումնական պարապմունքների մեկնարկից հետո (առկա ուսուցման՝ 7-րդ կիսամյակում և հեռակա ուսուցման՝ 9-րդ կիսամյակում) մեկ ամսվա ընթացքում:
5. Ավարտական աշխատանքի թեմայի փոփոխությունը և կամ ճշգրտումը կատարվում է մասնագիտական ամբիոնի ներկայացմամբ ֆակուլտետային խորհրդի կողմից ոչ ուշ քան ավարտական կիսամյակի ուսումնական պարապմունքներից մեկ շաբաթ առաջ:
6. Ավարտական աշխատանքի ղեկավար հաստատվում են ամբիոնների այն դասիստները, որոնց թեմաները ընտրվել են ուսանողների կողմից, որպես կանոն ղեկավար կարող են նշանակվել համապատասխան մասնագիտական ամբիոնի գիտական աստիճան, կոչում ունեցող աշխատակիցները, ասիստենտները, գիտական գործունեություն ծավալող այլ մասնագետներ: Ավարտական աշխատանքի ղեկավարի ընտրության հարցում մասնագիտական ամբիոնին հնարավորություն է տրվում համագործակցել այլ կառույցների հետ:
7. Յուրաքանչյուր դասախոսի թույլատրվում է տվյալ ուսումնական տարում ղեկավարել ոչ ավելի, քան 5 ավարտական շխատանք:
8. Ավարտական աշխատանքի ղեկավարի փոփոխությունը կատարվում է մասնագիտական ամբիոնի ներկայացմամբ ֆակուլտետային խորհրդի կողմից:
9. Մասնագիտական ամբիոնի կողմից կազմակերպվում է ավարտական աշխատանքի իրականացման մեկ հաշվետվություն՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն՝ առկա ուսուցման համակարգում համապատասխանաբար 7-րդ կիսամյակի և հեռակա ուսուցման համակարգում՝ 9-րդ կիսամյակի քննաշրջաններում:

**3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

4. Ավարտական աշխատանքն ունի հետևյալ կառուցվածքը.

Կառուցվածքը	Ներկայացվող պահանջները
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը աշխատանքի սահմանված կարգով լրացված առաջին էջն է, որն ունի տեղեկատվական բնույթ (տես հավելված):
Բովանդակություն	Ըստ հերթականության ներկայացվում են աշխատանքի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են աշխատանքին:
Ներածություն	Ներկայացվում են աշխատանքի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, վերլուծական և/կամ կիրառական նշանակությունը:
Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, իրականացված նախագծի կամ հետազոտության համառոտ նկարագրությունը, կիրառված մեթոդների ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը:
Եզրակացություններ	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի արդյունքները
Օգտագործված գրականության ցանկ	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է աշխատանքը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված
Հղումներ	Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում 8 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1, երկու կողմից հավասարեցված (alignment: Justify): Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (թավ տառերով՝ Bold), այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, հղվող աշխատանքի էջերի ընդհանուր քանակը:
Հավելվածներ	Առկայության դեպքում կցվում են աշխատանքին:

5. Ավարտական աշխատանքը հրապարակային պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, կազմված և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից, վերնից և ներքևից՝ 2.0 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին:

Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ՝ հայերեն տեքստերի դեպքում՝ GHEA Grapalat կամ GHEA Mariam, իսկ ռուսերեն և անգլերեն տեքստերի դեպքում՝ Times New Roman: Վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold), մեջտեղից և

գլխատառերով:

Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից, իսկ ենթագլուխները կարող են շարունակվեն նույն էջում: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ աջ կողմից: Համարակալումը սկսվում է առաջին էջից, որի վրա առաջին էջը չի դրվում:

6. Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց դրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում աջ մասում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

7. Աշխատանքի վերջում տրվում է օգտագործած գրականության ցանկն ըստ օգտագործած գրականության հերթականության: Ցանկում գրականությունը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակի (ների) ազգանունը (ները) և անվան սկզբնատառը (երը), այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ՝ <http://www.aspu.am>, 14.06.2017):

Գրքերի օրինակներ

1. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986.

383 p.

Հոդվածների օրինակներ

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկան բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: No 1: էջ 5-17:

2. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics. 1973. Vol. 5. No 3. P. 547- 561.

Ժողովածուի օրինակներ

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Ս. Ն. Հայերի մշակութային արժեքային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները:

Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: էջ 80-83:

Համացանցային ռեսուրսների օրինակներ

[https://www.native-english.ru/articles/prepod\(12.06.2017թ\)](https://www.native-english.ru/articles/prepod(12.06.2017թ))

[http://www.7ya.ru/article/Metodiki-prepodavaniya-avtorskie-razvivayuwie-netradicionnye/\(12.06.2017թ.\)](http://www.7ya.ru/article/Metodiki-prepodavaniya-avtorskie-razvivayuwie-netradicionnye/(12.06.2017թ.))

8. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]), կամ տողատակում՝ ըստ բերված օրինակի:

4. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Բակլավրի ավարտական աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ՀՊՄՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար սահմանված ուսումնական գործընթացի

Ժամանակացույցի համաձայն՝ համապատասխանաբար ավարտական 8-րդ և 10-րդ կիսամյակներում (տե՛ս ստորև աղյուսակում):

Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության ժամանակացույց

Գործողություն	Վերջնաժամկետ
Բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի ընտրություն և հաստատում, համապատասխան ղեկավարի նշանակում և հրամանագրում	6-րդ (հեռակա՝ 8-րդ) կիսամյակի ավարտ
Աշխատանքի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (Ժամանակացույցի) կազմում, գրականության վերլուծություն/մշակում	Ավարտական կիսամյակ՝ փետրվար
Աշխատանքի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի ներկայացում և քննարկում մասնագիտական ամբիոնում, որոնց հիման վրա իրականացվում է աշխատանքի կատարման առաջընթացի միջանկյալ ստուգում:	Ավարտական կիսամյակ՝ մարտի վերջ
Աշխատանքի արդյունքների ամփոփում, ղեկավարի կարծիքի ներկայացում, աշխատանքի նախապաշտպանություն: Էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում մեկ շաբաթվա ընթացքում	Ավարտական կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 20 օր առաջ
Մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքի գրախոսության կազմակերպում (տե՛ս Հավելված)	Ավարտական կիսամյակ, գրախոսականի ներկայացում մասնագիտական ամբիոն պաշտպանությունից առնվազն 10 օր առաջ
Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ստեստավորման հանձնաժողովի նիստում	8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակի ավարտ

2. Ավարտական աշխատանքի պատրաստման աշխատանքները կատարվում են ղեկավարի խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:

3. Ավարտական աշխատանքի ղեկավարի պարտականություններն են.

- ա) ավարտական աշխատանքի առաջադրանքի կազմում,
- բ) ավարտական աշխատանքի կատարման աշխատանքային պլանի (Ժամանակացույցի) կազմում և դրա իրականացման վերահսկողություն,
- գ) օգնություն ուսանողին՝ թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրության հարցում և խորհրդատվություն,
- դ) խորհրդատվություն ուսանողին՝ ավարտական աշխատանքի կատարման ողջ ընթացքում,
- ե) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,
- զ) աշխատանքի վերաբերյալ գրավոր կարծիքի կազմում:

4. Աշխատանքային պլանը և ժամանակացույցը հաստատում է ամբիոնը ոչ ուշ, քան տվյալ ուստարվա հոկտեմբերի 15-ը: Համաձայն Ժամանակացույցի՝ ուսանողն ուստարվա ընթացքում 3 անգամ՝ եռամսյակը մեկ, հաշվետվություն է տալիս ամբիոնին: Ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքները

կցվում են ավարտական աշխատանքին:

5. Ուսանողը թեմային համապատասխան կազմում է ավարտական աշխատանքի գրականության ցանկ, ղեկավարը՝ կազմակերպում է անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն:

6. Ավարտուն աշխատանքը ներկայացվում է ղեկավարին նախապաշտպանությունից առնվազն 3 շաբաթ առաջ:

7. Ավարտական աշխատանքը ղեկավարի գրավոր կարծիքի հետ միասին ներկայացվում է համապատասխան ամբիոն՝ նախապաշտպանության:

8. Ղեկավարի կարծիքում արտացոլվում են աշխատանքի արդիականությունը եւ կարելոթությունը, ուսանողի՝ ինքնուրույն հետազոտություն կատարելու, տվյալներ մշակելու եւ հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունները, կատարված աշխատանքի դրական կողմերը եւ թերությունները, ավարտական աշխատանքի ձեւավորման համապատասխանությունը սույն կանոնակարգի պահանջներին, երաշխավորություն ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության համար:

9. Ավարտական աշխատանքի նախապաշտպանությունը կազմակերպվում է պաշտպանությունից առնվազն մեկ ամիս առաջ համապատասխան մասնագիտական ամբիոնում:

10. Մասնագիտական ամբիոնը, ըստ ժամանակացույցի, կազմակերպում է ավարտական աշխատանքի նախապաշտպանությունը, որի ընթացքում որոշվում է՝

ա/ թույլատրել հրապարակային պաշտպանության՝ նշանակելով գրախոս,

բ/ վերադարձնել լրամշակման եւ կազմակերպել կրկնակի նախապաշտպանություն ոչ ուշ, քան հրապարակային պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ,

գ/ չթույլատրել պաշտպանության՝ նշելով պատճառները:

11. Նախապաշտպանության փուլն անցած ավարտական աշխատանքի համար մասնագիտական ամբիոնի կողմից նշանակվում է գրախոս, հնարավորինս ներգրավելով այլ ամբիոնների դասախոսների:

12. Գրախոսի կարծիքում արտացոլվում են. (ձեւ 1)

ա) աշխատանքի նպատակի, խնդիրների եւ եզրակացությունների համապատասխանությունը թեմային եւ բովանդակությանը

բ) աշխատանքի արդիականության հիմնավորումը եւ գրականության վերլուծությունը, ինքնուրույնությունը եւ դրանցում ստացված արդյունքները,

գ) աշխատանքի շարադրանքը եւ ձեւավորումը համաձայն սույն կանոնակարգի,

դ) դիտողությունները,

ե) եզրակացություն (աշխատանքը բավարարում/չի բավարարում ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին կամ սույն կանոնակարգին):

13. Պաշտպանության թույլատրված ավարտական աշխատանքն ամբիոն ներկայացվում է տպագիր և էլեկտրոնային (.pdf) տարբերակներով (CD կրիչով), գիտական ղեկավարի եւ պաշտոնական գրախոսի կարծիքներով հրապարակային պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ:

14. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է ՀՀ ՈԱԾ-ի 6-րդ մակարդակում սահմանված գիտելիքի, կարողության հմտության նկարագրիչներին և ՄԿԾ-ի վերջնարդյունքներին (Աղյուսակում տե՛ս ՀՀ ՈԱԾ-ի համադրումը գնահատման

չափանիշներին) համապատասխան և չափանիշներով և չափորոշիչներով՝ 100 միավորանոց սանդղակով (Աղյուսակում տե՛ս գնահատման չափանիշներն ու չափորոշիչները և հատկացվող միավորները) :

5. Բակլավրի գնահատման ամփոփիչ միավորը ձևավորվում է գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած միավորների միջինացմամբ: Ընդ որում ավարտական աշխատանքի արդիականության հիմնավորումը, գրականության վերլուծությունը /գնահատման չափանիշ 1/ հետազոտության իրականացումը և արդյունքները/գնահատման չափանիշ 2/ գնահատվում է գրախոսի կողմից, իսկ աշխատանքի շարադրումը, ձևավորումը, հրապարակային պաշտպանությունը, հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետումը /Գնահատման չափանիշ 3, 4/ գնահատվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից:

3. Բակլավրի ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:

4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողի ներկայությամբ:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Գնահատման չափանիշ	Չափորոշիչ	Մահմանված գնահատման միավորը
<p>1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը</p>	<p>1.1 Մասնագիտական աշխատանքը համապատասխանում է ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի համապատասխան մակար դակին, հիմնավորված է ուսում նառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիքներ վրա,</p> <p>1.2. Մահմանված են աշխատանքի նպատակը և խնդիրները,</p> <p>1.3. Կատարված է թեմային առնչվող գրականության վերլուծություն, խնդիրները լուծելիս ցուցաբերել է նորարարական ու առաջադեմ մոտեցումներ:</p>	<p>Առավելագույնը 10</p>

<p>2. Հետազոտության իրականացումը և արդյունքները</p>	<p>2.1. Աշխատանքը կատարված է ինքնուրույն՝ առաջադրված խնդիր ներին համապատասխան,</p> <p>2.2 Ստացված արդյունքները հիմնա վորված են և առաջադրում են դրված խնդիրների տեսական կամ կիրառական լուծումներ,</p> <p>2.3. Ցուցաբերված է քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ Կատարված է արդյունքների վերլուծություն, և արված են դատողություններ և համապատասխան եզրակացություններ</p>	<p>Առավելագույնը 30</p>
<p>3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը</p>	<p>3.1. Աշխատանքը շարադրված է , հստակ ու գրագետ: Առկա է մասնագիտական խնդիրների բացահայտման և լուծումների առաջադրման տրամաբանված և ստեղծագործական մոտեցումներ:</p> <p>3.2. Աշխատանքի գլուխների և ենթա գլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են Բովանդակությանը,</p> <p>3.3. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների ՏՀՏ-ներ կիրառելիությամբ:</p> <p>3.4. Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող՝ հավաքագրված մշակված և վերլուծված քանակական և որակական տվյալները, (աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, հարցաթերթիկ ներ, հարցազրույցների նմուշներ և այլն)</p>	<p>Առավելագույնը 20</p>
<p>4. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը: Հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետումը</p>	<p>4.1. Ձեկույցում հիմնավորվում են աշխատանքի կապը ՄԿԾ-ին, ՈԱՇ-ի համապատասխան մակարդակին , աշխատանքը ներկայացնելիս ցուցաբերում է վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ՝ դրսևորելով քննադատական մտածողություն:</p> <p>4.2. Ձեկույցը հստակ է և հետևողական կատարված աշխատանքի տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները և դրանց լուծումները զեկուցողը կարողանում է փոխկապակցված ներկայացնել և բացատրել մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և հիմնավորել արդյունքները:</p>	<p>Առավելագույնը 40</p>

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՏ

_____ ամբիոնի վարիչ _____-ին
ամբիոնի անվանումը Ա Հ Ա
_____ ուսանող/ուհի/ _____-ից
մասնագիտություն, կուրս Ա Հ Ա

Խնդրում եմ հաստատել ավարտական աշխատանքի _____

ԱԱ-ի թեմայի անվանումը

_____ թեման և _____ ղեկավար նշանակել
_____ -ին:

ԱՀԱ ստիճան, կոչում, պաշտոն,

_____ ամսաթիվ

ուսանողի ստորագրությունը և հեռախոսի համարը, էլ. հասցեն

Համաձայն եմ ղեկավարելու

_____ ամսաթիվ ղեկավարի _____ ԱՀԱ և ստորագրությունը

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՁԵՎԱԶՍՓ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

<u>Մասնագիտություն</u>	
<u>Ուսանողի ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ</u>	
<u>Ղեկավարի ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ԿՈՉՈՒՄ</u>	
<u>ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԱԳԻՐԸ</u>	
<u>ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u>	
<u>ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ</u>	

Մասնագիտություն	
ԱԱ-ի թեմա	

1. Աշխատանքի ծավալը. էջերի քանակը՝ _____, գրաֆիկական մասը՝ _____ էջ:
 2. Հետազոտության նպատակն ու խնդիրները.

3. Հետազոտության թեմայի արդիականությունը, տեսական և/կամ կիրառական նշանակությունը

4. Աշխատանքի բովանդակության համապատասխանությունը առաջադրված խնդրին (լրիվ կամ մասնակի).

5. ԱԱ-ի հիմնական առավելություններն ու թերությունները. _____

6. Ուսանողի ինքնուրույնության և հետազոտական աշխատանք կատարելու ունակության աստիճանը (նյութը փնտրելու, ընդհանրացնելու, վերլուծելու և հետևություն կատարելու հմտություններ և կարողություններ).

7. ԱԱ-ի կատարման ժամանակ ուսանողի ծավալած գործունեության գնահատականը (բարեխղճության, աշխատունակության, պատասխանատվության և այլնի աստիճանը)

8. Տեքստային, գրաֆիկական, ցուցադրական մասի, նկարագարդման, համակարգչային և տեղեկատվական նյութի ձևավորման առավելություններն ու թերությունները: Ձևավորման համապատասխանությունը պահանջվող չափանիշներին.

9. ԱԱ-ի արդյունքների կիրառելիության հնարավորությունն ու նպատակահարմարությունը

10. Ներկայացված ԱԱ-ի վերաբերյալ ընդհանուր եզրակացությունն ու առաջարկվող գնահատականը.

Ղեկավար՝ _____

Ամսաթիվ

Հավելված

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամբիոն _____

Ամբիոնի անվանումը

Ամսաթիվ

ԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ

ԳՐԱԽՈՍՄԱՆ

ՆՊԱՏԱԿՈՎ

Հարգելի _____

Գրախոսման նպատակով Ձեզ ենք ուղարկում ուսանող-

_____ ի _____

ուսանողի ԱՀԱ

թեմայով
ավարտական

ԱԱ-ի թեմայի անվանումը
աշխատանքը: Խնդրում եմ Ձեր գրախոսումը ներկայացնել ոչ ուշ, քան _____:

Ամսաթիվ
աշխատանքի պաշտպանությունը նշանակված է _____:

Ամսաթիվ

Ամբիոնի վարիչ՝ _____ Կ.Տ.

Ամբիոնի անվանումը

Ստորագրություն

Հավելված

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսանող _____

ԱՀԱ

Ամբիոն _____

Ամբիոնի անվանումը

ԱԱ-ի թեմայի

անվանումը

թեմայով ԱԱ-ը ներառում է _____ էջ բացատրական գրառում և _____ էջ գրաֆիկական նյութ:

Աշխատանքի գլուխները, կատարված ուսումնասիրությունները և ծավալը _____
ԱԱ-ի համար ներայացվող պահանջներին: (համապատասխանում, չի համապատասխանում)

Աշխատանքի հիմնական առավելություններն ու թերությունները

1. Թեմայի համապատասխանությունը ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 6-րդ մակարդակին, ձևակերպած հիմնախնդիրը, հետազոտության սահմանած նպատակը և խնդիրները, *արդիականությունը*, տեսական և/կամ կիրառական նշանակությունը

2. ԱԱ-ում կատարված աշխատանքի ինքնուրույնությունը, հետազոտության թեմային համապատասխան գործնական (կիրառական) տիրույթներում նորարարական մոտեցումների և ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտությունների առկայությունը:/ հակիրճ բնութագիր/

3. ԱԱ-ի առավելությունները, որտեղ երևում են՝ քանակական ու որակական տվյալների վերլուծություն, համապատասխան եզրահանգումներ, ուսանողի ինքնուրույնություն, տեսական պատրաստվածության աստիճանը, արդյունքները բացատրելու և որոշումներ կայացնելու հմտություն և այլն

4. Թեմայի վերլուծությունը և ամփոփումը հենվածությունը անհրաժեշտ գրականության շրջանակում մասնագիտական սկզբունքների ու մեթոդների իմացության վրա

5. Հատուկ դիտարկումներ, ցանկություններ և առաջարկություններ

Պաշտպանության թույլտվության հնարավորություն՝

Գնահատական (1-100)

Գրախոս՝ _____ / _____ /
ստորագրություն անունը, ազգանունը
Ամսաթիվ՝ «___» _____ 20__ թ.

ԽԱՉԱՏՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [14 pt, Bold]

_____ **ՖԱԿՈՒԼՏԵՏ [12 pt, Bold]**

_____ **ԱՄԲԻՈՆ [12 pt, Bold]**

_____ **ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ [12 pt, Bold]**

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ [14 pt, Bold]

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [16 pt, Bold]

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ [18 pt, Bold]

Գիտական ղեկավար՝ _____ [13 pt, Bold, Italic]

ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ [13 pt, Bold, Italic]

Ստորագրություն

աստիճան, կոչում, ազգանուն, անուն _____ գիտ.